


ԻՇԽԱՆ ՈՒՄՊԵՐԹՈՅ Տ՛ԱՊՐՈՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ԲՏԱԼԱԿԱՆ, մեծ յաղթութենէն քանի մ'օր վերջ, Բիաւէ գետի պատմական դարձած ափերէն, ուր կը բարախէր ամբողջ իտալիոյ սիրտը տօնական ցնծութեանց ու անսահման գինարուրդի մէջ, տեանուեցաւ երեսասարդ սպայ մը, որ ջոկուելով ուրախութենէն խելաթափ եղած իր զէնքի ընկերներէն, կ'երթար սրարջաւ դէպ ի Ալքրիականի լճակը: Զինքը չճանչցողնեւրուն այնպէս կը թուէր՝ որ ան կը թուէր դէպի իր սիրասուն ծնողաց գիրկը, ուրոնք անհամբեր կը սպասէին իր զաւլուտեան, կամ նետուելու կ'երթար Ալքրիականի դշտոյին ճոխափարթամ կեանքի գոգը, ինչ որ իրենց արդար վարձքը կը համարէին խրամներու տիւր ու չարքաշ կեանքը ապրող զինուորականները:

Ո՛չ, այդ երիտասարդ սպան հետուէր այդ երկու նպատակները հետապնդելէ, ան հետն առած ուրիշ բարձր գաղափարական մը՝ զոր տարիներով կը պահէր ու կը փայփայէր իբրեւ նուիրական աւանդ մը, կ'ուղղուէր Հայոց Ս. Ղազարի կղզեակը, զոր կը նկատէր իբր Հայաստանի նախադուր, որու սեմը կ'ուզէր կոխել կրօնական տեսակ մ'երկիրաճութեամբ:

Յաղթուած էին իր որդեգրած հայրենիքին թշնամիները, յաղթուած էր այլեւ չի կանգնելու համար իր ցեղին դարաւոր թշնամին: Իր պարտքին մէկ դժուար և վտանգաւոր մասը վերջացուցեր էր փառքով, կը ֆիար իրեն հիմա ձեռնարկել միւս պարտականութեան, աւելի քաղցր, աւելի մխիթարական, այն է՝ երթալ Վենետիկեան ափուցներուն վրայ փութած կարմիր կղզեակը, ուր կ'ուզէր մտնել արդիւնքով պատկուած, որպէս զի իր «անձը դնէ Մխիթարեան Հայոց տրամադրութեան տակ», ինչպէս կը զրէ մեզի իր հայրը, Բագրատունի Ասլան իշխանը, ընդունելու

համար անոնցմէ հրահանգներ ապագայ ազատ Հայաստանի վերականգնման համար:

Սակայն տխուր, դժբախտ օրեր էին, սպանիական համաճարակի գործունեայ շրջանն էր, մէկը այն ահռելի ժանտախտ ներէն, որ աւելի մեծ թուով երիտասարդ կեանքեր քաղցր, քան աշխարհաստան այս պատերազմը: Երեքուկէս տարի թընդանօթներու ոռւմբերէն դուրս ցցուող մահը չէր համարձակած դիմագրաւել սաստկագոյն վտանգներու առջև կուրծք տուող մեր երիտասարդ սպան, և ահա այդ դաժան, անողոր հիւանդութիւնը քանի մ'օրուան մէջ խամբեցուց անոր ծաղիկ հասակը Վենետիկի ճամբուն վրայ գտնուող անշուք աւանի մը մէջ, Սան Մարթինօ տի Լուարի, որ պատիւն ունեցաւ ժողովելու իր ազնուական աճիւնները:

Հայաստանի այդ ապագայ գործիչը, որ աննշացաւ իր առաքելական կէս ասպարիզին վրայ, հայազգի իշխան Ուսպերթոյ տ'Ապրոյ Բագրատունին էր:

Մինչ իտալական օրաթերթերը, իր զօրավարին նամակը, Նափոլիի հասարակութեան և իր շահապին, ինչպէս նաև շատ մը նշանաւոր անձանց ցաւակցական նամակները ծանուցին մահը և լիուրի գովութիւններով դրուատեցին խոստումնալից հանգուցելոյն արժանիքը, անստգիւտ վարքը և զինուորական անպարտելի քաջութիւնը, որքան աւելի պարտք ունինք մենք, — աւելի սերտ և անուռ կապեր ունենալով իր ազնուազարմ գերդաստանին հետ, — իրեն նուիրելու «Բագրատէպ»ին քանի մ'էջեր, իբր յարգանքի դրօշն նշանակ մը:

Իշխան Ուսպերթոյ տ'Ապրոյ Բագրատունի, միակ որդի իշխան Ասլանի և իշխանուհի Մելանիա տի Վիլա Մարինա

Բագրատունեաց, ծնաւ ի Հոռմ 1886ին: Յիշատակութեան արժանի հանգամանքն այն է, որ այդ ծնունդը պատահեցաւ Կոնստանդնուպոլսէն, որ արեւմտեան պալատին մէջ, որ առաջին անգամ հայ իշխանագլուխի մը շնորհեց օրօրքի օթեմանը: Հոս մկրտուեցաւ նաև, կնքամայր ունենալով իրեն խաւիոյ վեհափառ Մարգարիտա հայասէր թագուհին, որ մասնաւոր գուրգուրանք մը կապեց իր հոգեզաւակին վրայ, որու մէջ միացած կը տեսնէր զոհունակութեամբ հայ և իտալական արեան ազնուականութիւնը:

Գեղադէմ, բարակ և գրաւիչ գծերով, կանխիկ ջրայ տուաւ զարմանալի ուշմութիւն մը, որ խառնուած քաղցր և աւանդաբան կերպերուն հետ, սիրելի կ'ընէին զինքը ամենուն: Հեշտ է երեսակայեւ, թէ ինչպէս ինքնաբերական և իր աստիճանին վայելուչ կրթութիւն մը ստացաւ հայրենի յարկին տակ, ուր իր առաջին դաստիարակներն եղան իր վրայ գուրգուրացող ծնողքը: Մինչ Ալան իշխանը անոր կու տար հայութեան սեփական լուրջ նկարագիրը, իր ապագան իր քրտինքի աշխատութեամբ ստեղծելու բնագոյն, իշխանուհին Մելանիա պահագան հրեշտակ մ'եղաւ իր զաւակին առաջին քայլերուն, տալով անոր սրտին այնպիսի քնքոյշ զգացումներ, որ յատուկ և ինքնաբերական արուեստ մ'է բարետոհմ ու բարեպաշտ իտալական ընտանեաց:

Նախնական և լիկիրճական ուսումները մեծ յաջողութեամբ աւարտելէ վերջ, իշխան Ումպերթոյ մտաւ Նափոյի համալսարանը, ուր արձանագրուեցաւ իրաւագիտական բաժնին մէջ: Ինք հայազգի, ի վաղուց սորվեր էր սրտին մօտ բռնել ճնշումներու դատը, և ուզեց իր մտաւորական այնքան փայլուն ձիրքերը ի սպաս դնել բռնացող բազուկներու դէմ: Իր մեղուցման աշխատութեամբ, իր լրջութեամբ, Ումպերթոյ իշխանը ցիւց ժամանակի մէջ իր ուսուցչապետներուն ուշը գրաւեց, առարկայ դառնալով անոնց սիրոյն և համակրութեան, ինչպէս որ յարգելի և պատկառելի դարձեր էր իր զասրնկերակցաց, որոնց աչքին ան կը ներկայանար

իր տարօրինակ անձնաւորութիւն մը, որ ցիւց կը զօսնուր, բայց որ շատ կ'աշխատէր. որ ցիւց կը շաղակրատէր, բայց շատ կը մտածէր, և որ վայելքի ամէն դիւրութիւն ունենալով, միակ վայելքը կը փնտէր ուսուցչապետաց հետ գիտական շփոթութեամբ ընկերելու, գրեցրու մէջ թարթափելով և անդադար գրատունները այցելելով. և շնորհիւ այս յամառ կամքին՝ ամենէն աւելի վստահաւոր հասակի մէջ գերծ մնաց ան ամէն տեսակ փոթորիկներէ, և ամուր բռնելով մտքին դեկը, երբեք խաղալիկ չ'եղաւ կրքերու բռնութեան. որ այնպէս գիտէ դարանել պատանեկութեան և երիտասարդութեան փափուկ հասակին: Յիրաւի, մեր իշխանը հակապատկերն էր հարաւարտակ իտալացի իր գրքի ընկերներուն, որ վառվռուն, աշխուշ ու զանաթ ինչպէս իրենց զլխուն վերեւ կախուած երկինքը, կ'ախորժին ամէն բանէ առաջ գուրգուրանալ, ծիծաղիլ, շաղակրատել, անհոգ վաղուան բերելիք անանկականերուն, ու կեանքի քաղցրութիւնը դնելով ժամերը դատարկ անցնելու մէջ:

Հասակին հետ կ'աճէր հաւասարապէս մտքի ոյժը, բանալով իրեն առջև գիտական ծանօթութեան նոր հորիզոններ: Մինչ իր ընկերները պարծանք կը սեպէին իրենց, ի՞նչ յաջողէին մարքին լեզուէն գաւ, օտար լեզու մ'էս իւրացնելու, հայ իշխանը քաղաքագէտ մտքի և գիտական հարուստ պաշարի հետ, օժտուած էր լեզուագէտ տաղանդով, քաջամուտ և ներհուն էր իտալերէն, գաղղերէն, անգլիէն, բելճ, գերմաներէն, ռուսերէն, հին և նոր յունարէն և լատիներէն բարբառներուն, որոնց այնչափ փայլ մը տուին իրեն՝ որ ամենուն նախանձիկ կ'ընէին զինքը: Եւ ի՞նչ ան չկրցաւ ազգային լեզուին ու պատմութեան ուսման նուիրելու իր անձը, այդ պակասը խոր վիշտ մ'եղաւ միշտ իր վեհ ոգոյն և ազգասէր փափուկ սրբտին, և զոր կ'ուզէր բուռն տենչով ձեռք բերել, այն ինչ ինքզինքը գտնէր հայկական շրջանակի մը մէջ:

Ի հարկէ, այսչափ ճիգ, այնքան յա-

մառ տքնութիւնը, պիտի տային իրենց արդիւնաւոր պտուղը: Իշխան Ումպէրթոյ Բազրատունին ամենամեծ յաջողութեամբ բոլորեցով իր համալսարանական շրջանը, քաջագունի դասինէ պատկը ընդունեցաւ, որու վկայ են իր ուսուցչապետաց գովեստով լի դրուատիքները, և վկայուեցաւ Վարդապետ օրէնագիտութեան և միջազգային իրաւանց:

Նորապսակ փաստարանին առջև բացուած էր ողջամիտ գիտութեան դաշտը, ուր ան կոչուած էր բերելու իր քրտնաթոր աշխատութեանց լայն բաժինը, երբ վրայ հասաւ կեդրոնական կայսրութեանց երազած համաշխարհային պատերազմը, որ նոր աշխարհներ պիտի տար իրենց, որ ուրիշ նոր ազգեր պետի դնէր իրենց երկաթէ տիրապետութեան տակ: Խաւիան, իրաւունքներու որորանը, չղեղենցաւ և ոչ վայրկեան մը քաշելու սուրը պատեանէն մարդկային իրաւունքները բռնաբարող իր նախկին դաշնակիցներուն դէմ, և Հոռմ որոշեց քաղաքակրթութեան անունով, որ տետոնական հեղեղը ջախջախուի հոն, ուր երկու հազար և քսան տարի առաջ ոչնչացուցեր էր անոնց պատերուն եւրոպաստան առաջխաղացութիւնը:

Սակայն խաւիան ալ ունեցաւ իր տխուր օրերը. նախկին խանդավառութեան թափը կանգ առաւ, երիտասարդ կեանքերը զգացին իրենց բոլոր քաղցրութիւնը, քաղաքներու և դաշտերու մէջ վիտացին դաջալիքներն ու անտառամուտները, սուղ գնելով իրենց պաշտպանաւորներէն անարիւն յաղթութեանց դափնիները: Այս շրջանին ահա, որ մեծ բախտ կը համարուէր պատերազմի ճակատը օրաթերթերու մէջ միայն կարդալ, իշխան Ումպէրթոյ տ'Ապոյոյ Բազրատունին բռնի ձեռք բերաւ կամաւոր զինուոր երթալու հրամանագիրը: Ինքը, ազնուական և ճոխ ընտանեաց շառաւիղ, միակ ժառանգորդ փառաւոր տիտղոսներու և նախանձելի ժառանգութեանց, զոր ձեռք բերելու համար կան մարդիկ որ կը նուիրեն իրենց

բովանդակ կեանքը, անով մեծ և երջանիկ երկնալու համար, իսկ ան մոռցաւ իր չորս կողմը ժպիտ ցանող երջանկութիւնը. մօրմէն ու հօրմէն՝ զորս կը պաշտէր ու կը մեծարէր իրր ծնողական օրինակելի տիպարները, նախադաս համարեցաւ զաղափարը, որու սիրոյն համար զոհեր էր իր ամենէն գեղեցիկ տարիները: Ինչ աւելի քաղցր նուիրական բան իրեն համար, քան երթալ կողք կողքի կանգնիլ միլիոնաւոր մարդոց շարքին մէջ, և արեան գնով ջատագով հանդիսանալ իր հեռաւոր հայրենիքին, որու միակ զինուորն եղաւ այս ճակատին վրայ, և միւս որդեգրած հայրենիքին, որու սահմանները կ'ուզէր մտցնել բնութենէն գծած ծրին մէջ: Իր օրերուն ամենագեղեցիկն այն եղաւ, երբ տառատու կը հագուած, գնաց կանգնեցաւ կրակին առջև:

Այդ օրէն ի վեր, չեղաւ վայրկեան մը որ ան հեռացներ իր պարտականութեան տեղէն, չ'եղաւ բոպէ մը՝ որ իր զլիւն վերեւ սաւառնող մահը թուլացներ իր պողպատէ կոբովը, նոյն իսկ այն ատեն, երբ կրակի մկրտութիւնն առած, կը փոխադրուէր զինուորական հիւանդանոցը, և այն ինչ սպարքինած, կը վերադառնար նոյն տեղը, և գօտեւորուած միշտ մի և նոյն կողովով, ոգևորուած սուրբ գաղափարի մի և նոյն թոխչներով: Իր փառապանծ նախնեաց արիւնն էր որ կը խաղար իր երակներուն մէջ, այն արիւնը՝ որ անխորտակելի քաջութեամբ կը խլաւ իր Քրիստոնէութեան ոսոխ Պարսից, կեղեքող Արաբացոց և նենգաւոր Բիւզանդացոց դէմ:

Հոս պահ մը կանգ առնենք, և թողունք որ խօսի իտալական արքայական բանակին Հրետանիի ընդհանուր հրամանատարը, զօրավար Ալֆրէտոյ Գոլլիոյ, որ պարզ և ներկուռ ոճով կը պատկերացնէ երիտասարդ հայ սպային աստիճանէ աստիճան քարձրանալը, անոր դիւցազնական շահատակութիւնները, անոր զինուորական անթերի տիպար հանդիսանալը, և այն ատեն դիւրաւ կը համոզուինք թէ

Բագրատունի իշխանէ մը տարբեր քան չէինք կրնար սպասել: Ահա բառ առ բառ զօրավարին խօսքերը:

«Տ'Ապրոյ սպան պաշարման 328դ հրեւ-
« տաշարի մէջ մտնելէ առաջ, ուր մնաց
« աւելի քան տարի մը՝ 1915ի օգոստոսի
« 6էն մինչև 1916ի հոկտեմբեր 5ը յանձ-
« նուեցաւ իրեն ամենագոգուշաւոր պաշտօն
« մը արքայական ծովային զօրութեան
« պատուէրներուն ներքև. այդ պաշտօնին
« նիւթին նկատմամբ վերապահեալ դիրք
« մը բռնեց նա նոյն իսկ իր ընկերներն-
« ռուն հետ և միայն այսչափ հասկցուց
« որ ստանձնած էր շատ փափուկ և դը-
« ժուարին գործ մը: 1915ի հոկտեմբեր
« 5էն մինչև 1916ի հոկտեմբեր 31, նշա-
« նակուեցաւ Հոռոմի մէջ իրական անդամ
« երրորդ հրետազուհդի Ամրութեան մթե-
« ղանոցին մէջ, ուր ան կատարեց պաշ-
« տօններ՝ որ կախումն ունէին վերոյի-
« շեալ առաքելութեան հետ: 1916ի հոկ-
« տեմբեր 31էն մինչև 1917 յունուար 5ը
« մնաց նա պաշարման հրետանիի 328դ
« գունդի մէջ:

«Տ'Ապրոյ սպան, ըստ տեղեկագրու-
« թեան իր հրամանատարին, հազիւ հա-
« սած իր Բաժնեգունդը, գիտցաւ իր բա-
« ռութեամբ, դաստիարակութեամբ և իս-
« կապէս խորին զարգացմամբ իրեն գրա-
« լւի բոլոր ոգիները իր մեծերուն, ըն-
« կերներուն և ստորակարգեալներուն:

« Այդ ժամանակ Հրետանին կը գտնուէր
« Ռատոսի շրջակայքն ի վալլարսա՝ յա-
« ռաջացած դիրքի մը մէջ բայց և ոչ
« այնչափ ենթակայ բախման:

« Այդ տեղէն՝ 1917 ապրիլին տեղա-
« տարիւցեալ Պասուրիոյ վրայ և ճիշտ
« Վոյլին Շեմը կոչուած տեղը: 1917 յու-
« նիսին Հրետանին զործունեայ մասնակ-
« ցութիւն մ'ունեցաւ նոյն այդ Պասու-
« բիոյ պաշտպանութեան մէջ և սաստկա-
« պէս հակառմարակոծուեցաւ և որ ոչ
« նուազ ֆնասներ կրեց: Տ'Ապրոյ սպան
« իրը հրամանատար հատուածագօրին՝ ազ-
« դու կերպով օգնեց իր սեփական հրե-
« տանիին հրամանատարին՝ ձեռնարկին

« յաջող ելը մը տալու համար, տալով
« քաջութեան, անձնուրացութեան և բարձր
« զգացումներու ապացոյցներ իր պար-
« տուց կատարմանը: Մասնաւորապէս իր
« հատուածագօրը սաստկապէս ոմբակո-
« ծուեցաւ:

« Իյնալով ապա հիւանդ, պատուա-
« ռուեցաւ Սըրիոյի հիւանդանոցին մէջ և
« հոն ենթարկուեցաւ աղէթափութեան
« վիրարութեական գործողութեան, որ կ'ը-
« բեր թէ յառաջ եկած էր այն սաստիկ
« ուժէն՝ զոր գործածեց ան կանգուն պա-
« հելու համար 210ոց ոււմը մը որ վտանգ
« կը սպառնար և կարող էր ֆնասներ
« պատճառել:

« Նա թողուց հրետանին մոռնելու հա-
« մար այն ատեն միայն հիւանդանոցը՝
« երբ ցաւին սաստկութիւնը բռնադատեց
« զինքը ասոր, բայց մինչև յետին րո-
« պէն աշխուժութեամբ աշխատեցաւ:

« Ելլելով հիւանդանոցէն, վարիչ-բժիշ-
« կը առաջարկեց իրեն ապաքինման ար-
« ձակուրդ մը՝ զոր նա մերժեց, որպէս
« զի երթայ միանայ անմիջապէս հրետա-
« նիին՝ որ այդ ատեն կը գտնուէր ի Մոն-
« թէ Քուրդոյ (Բաենզիբա) 1917 օգոստոս-
« սի այն գործողութեան միջոց՝ որու նա
« եռանդուն մասնակցութիւն մ'ունեցաւ:
« Այդ գործը վերջանալուն պէս, ան ու-
« բիշ մարդոց հետ վրան առաւ պաշարման
« մը, որ է՝ Ս. Գարրիէլի ստորոտը պաշտ-
« պանողական զօր մը յօրինուածու-
« թիւնը, գլխաւոր նպատակ ունենալով
« առաջին գծէն դուրս տարածելու ցան-
« ցագիծերը հետեակագօրուն առջև, և
« այն՝ հրացանածգութեանց և զնդակա-
« ձիւներու ազդու և միշտ վառ պահուած
« կրակի մը տակ:

« Ան գիտցաւ մեծ քաջութեամբ և վը-
« տանգը արհամարհելով՝ կատարել իր
« բոլոր պարտականութիւնը, արժանանա-
« լով ամենուն հիացման ու զովեստեն-
« ռուն:

« Անպտեմբերի 1917ին հրետանին փո-
« յադրուեցաւ ի վալ Սուկանա և նոյն
« այդ տեղափոխութեան մէջ, ի բացա-

« կայութեան հրամանատարին, ան կա-
« ռավարեց հրետանին, որ դիրք բռնեց
« Սիլլա Բրենդանայի վրայ, ուր մնաց
« վեց օր միայն, նահանջի պատուէրներ
« ընդունած ըլլալով ֆափորէթթոյի ա-
« դէտին հետեանցով:

« Ընդունելով պատուէր գետեղելու և
« ապահովցնելու հրետանիին թնդանօթ-
« ները, սպաններ և զինուորներ մնացին
« մինչև վերջին կէտը, ցոյց տալով քա-
« ջութիւն, անձնուրացութիւն և զոհողու-
« թիւն, ինչպէս նաև տոկունութիւն ա-
« մենատաժանելի և վտանգաւոր աշխա-
« տութեան մէջ, գործադրելու միւս թըն-
« դանօթներուն փոխադրութիւնը, որոնք
« վտանգի մէջ կը գտնուէին:

« Տ'Ալլոյ սպան սուտ չհանեց իր
« գործունէութեան, կորովի և մանաւանդ
« քաջութեան համբաւը:

« 1917ի դեկտեմբերի մէջ նշանակուե-
« ցաւ իբր դէտ պաշարման 43դ խմբա-
« կին՝ ուր մնաց մինչև 1918ի մարտի
« 27ին, խզամիտ և փութաշան իր փա-
« փուկ ու կարեւոր պարտականութեան
« կատարման մէջ, և անվեհեր մնաց թըշ-
« նամի հրետանիին կրակին տակ Սթիա-
« ըրէ Լեռան դիտանոցին մէջ ամենայա-
« ռաջացած զիտանոց՝ կարի շատ ուրա-
« կոծուած և յոյժ նեղացուցիչ:

« 1918ի մարտի 27էն մինչև իր մուտըն
« ի հիւանդանոցը, ուր գժբախտաբար պի-
« տի վերջացնէր իր կեանքը, ընդհանուր
« գումարման հրամանատարէն կոչուեցաւ
« ան իբր իրագել սպայ հրամայելու ըն-
« կերութեանը իր Սպայակուտի Գնդա-
« պետին՝ նկատի առնելով անոր նախըն-
« թացարար մատուցած պատերազմի եր-
« կար ծառայութիւնը և մանաւանդ յա-
« ռաջացած տարիքը:

« Ուրչափ կը հաւաստեն իր նախկին
« մեծերն և ընկերակիցները, ան մարդ
« մ'էր՝ որ ամենարարժը գիտակցութիւն
« ունէր իր սեփական պարտքին. անխոնջ
« ու խզամիտ աշխատաւոր, թէպէտ իր
« հասակին և ամենարնգարձակ զարգաց-
« ման համար և տեղեակ աւելի քան հինգ

« լեզուններու, պիտի կարենար դիւրու-
« թեամբ գտնելու վտանգէն հետեանալու
« կերպը և կատարելու իր աստիճանին
« պատշաճ պաշտօնները:

« Ամենայարգալի առ իր մեծերը, ազ-
« նիւ ընկերներուն հետ, արդար և բարի
« ստորակարգեալներուն հետ, կ'արթնցը-
« նէր համակրանքն և սքանչացումն ամէն
« անոր՝ որ զինքը կը ճանչնար և յատ-
« կապէս իր զինուորները շատ կը սիրէ-
« ին զինքը:

« Ունէր նաև ամենաընտիր զինուորա-
« կան զարգացում, խանդակաթ սէր մը
« կը տանէր զէնքերուն և իր հրետանիին՝
« որու պատկանիլը պատիւ ու պարծանք
« կը համարէր իրեն և որ և է առիթ չփա-
« խուց բնաւ նորէն անոր մօտենալու »:

*
* *

Այս անպաճոյճ, քայց վերին աստի-
ճանի տպաւորիչ տողերուն առջև կարելի
բան չէ որ ազգասէր սիրտ մը չնգմուի, և
չփորձուի ասփոստալու թէ ինչո՞ւ այսչափ
հազուադէպ յատկութիւններ և ձիրքեր
համախմբուած են մէկ մարդու մը մէջ, որ
փայլակի մ'արագութեամբ պիտի անցնէր,
իր փայլն ու հմայքը միայն թողով իբր
յիշատակ իր սիրակցորդներուն, որոնց
թեթև սփոփանքը այն պիտի ըլլայ թէ
« ի սակաւուն ելից ժամանակա բազումս »:

Ուր էր թէ զիւցազնը ռազմի դաշտին
վրայ ինկած ըլլար, իրմէ պատրաստուած
յաղթութեանց խառնուրդին մէջ, այն ա-
տեն իր մահը իր խկ աչքերուն պարտքի
գերագոյն պահանջ մը պիտի թուէր, և
զինքը ողբացող արցունքները նուազ վշտով
պիտի օրօրէին իր պանծալի շիրիմը, քայց
եթէ իր դիակը չգտնուեցաւ խառն միւս
քաջերուն հետ, ասով ան չդադրիր հայ-
րենիքի համար զոհ մը նկատուելէ, քանի
որ իր բժշկին պաշտօնական զեկոյցին հա-
մեմատ, իր վերջին տարափոխիկ թո-
քացնցդատապ հիւանդութիւնը, հետեանք
պատերազմի աղէտներուն, իշուցին զինքը
գերեզմանը: Եւ արդէն խորին համոզումով

ըսած չէ՛ր ան իր ֆիրմային Գնդապետին՝ թէ « զինուորի մը պարտքն մահով միայն կը վերջանայ »: Եւ ինքը, ինչպէս կ'ըսէ Գնդապետը Հանգուցելոյն ծնողաց ուղղած իր ցաւակցական նամակին մէջ, մինչև ի խոր կատարեց իր պարտքը և իր մահն եղաւ այնքան ազնիւ որքան համեստ անձնօթ հետեւակին՝ որ կ'իյնայ՝ հազիւ հասած թշնամի խրամատը: Եւ Գնդապետը, « որ սորված ու ճանչցած էր գնահատելու անոր մէջ աշխատանքի տոկունութիւնը, պարտքի ամենաբարձր զգացումը, համեստութիւնը և այն առողջ ազդեցութիւնը զոր ան ներգործեց իր դեռահասակ ընկերներուն վրայ », խորտակած սրտով կը հաստատէ՝ որ « Այնչափ բազմաթիւ երիտասարդ ընկերներէն, զոր կորուստի ես այս պատերազմի մէջ, ո՛չ որ իրմէ աւելի իմ մէջս թողուց այնչափ ցաւալի աշխարանք. ո՛չ մէկուն մէջ գտած էի այնքան ազնուական զգացումներ և սրտի այնքան պարզութիւն »:

Անողորհ հարկը սակայն իրեն զլացաւ նոյն իսկ այն վերջին սփոփանքը զոր սիրելի մը կու տայ իրմէ հեռացող հոգեհատորին: Իր ամենազնուական մայրը, իշխանուհի Մելանիա, որ պատերազմի սկիզբէն մինչև վերջը անձնանուիրութեան հիանալի օրինակ մը հանդիսացաւ, զինուորական հիւանդանոցներու սփոփարար հրեշտակն ըլլալով, որ բերաւոր հեռաւոր մայրերու տեղը բռնեց, անոնց զաւակներուն շուպիւղով մայրենի գորովայնը քաղցր ժպիտը, ճգնաժամի այն յետին բուպէններուն իր զթոռ ձեռքերով անոնց աչքերը փակելով, չկրցաւ իր սեփական պաշտելի որդւոյն տալ հրաժեշտի յետին ողջոյնն ու փակել գէթ վերջին վայրկեան այն աչքերը, որոնց վրայ սովոր էր կանգ առնել իրր բարութեան խորաններու:

Այն քանի մ'օրերը՝ ուր անկողինը գամուեցաւ Բագրատունի իշխանը, եղաւ բարի և համբերատար, ինչպէս էր միշտ, և երբ զինք եկող տեսող ընկերները վաղանցուկ կը համարէին չարիքը, ինքը, ինչպէս կ'ըսէ ականատեսն նամակագիր մը,

մարգարէացաւ իր վախճանը ըսելով. « Այս իմ վերջին հիւանդութիւնն է »: Եւ այդպէս ալ եղաւ:

Ինչպէս որ համեստ ու անշշուկ ապրած էր, նոյնպէս համեստ ու անշշուկ կատարուեցաւ իր յուղարկաւորական հանդէսը, որու նկարագրութիւնը կը գտնենք ականաւորես ի նամակին մէջ: « Հանգուցելոյն դազաղը



Իշխան Ռամսէյթոյ տ'Ապրոյ Բագրատունի:

շրջապատը էին կաթթի Գնդապետը, ընկերները, հիւանդանոցի տեսուչը Էրէրօ Գնդապետը և բժիշկ սպաները »: Ահա այս էր միակ շքախումբը որ « առաջնորդեց Ռամսէյթոյ իշխանը իր յաւիտենական հանգիստը, մինչդեռ կ'իյնար առաջին ձիւնը »: Բայց այս ընտիր խմբակը իր կորսնցուցած սիրելի բարեկամը պատուեց սրտազեղ զգացումներու մաքրութեան ու պարզութեան մէջ: Սպաներուն և զինուորներուն զէմքերուն վրայ արտայայտուած յուզմունքը կրկնապատկուեցաւ, երբ արծաթեայ ձայն մը, անկեղծ, գորովայն, որոտաց ցաւէն ուշաթափ սգաւորներուն:



Սպայ Անֆոգի Դոսադոն էր, որ ի դիմաց ամենուն իր գեղեցիկ ու սրտաշարժ դամբանականովը վերջին բարեն կու տար զինուց շահուններուն վարժ իր մտերմին:

« Հենկլտանքներուս գեղումով հազիւ կրնամ ուղղի քեզ այս ողջոյնը որ մեր սրտին մասն է: « Եստուս մեր Պետերուն, յանուն Պ. Ֆիրոյէ « Գնդապետին, որուն հասած չէ սրտաբեկ գոյժը, « ապա թէ ոչ, շատ հեռուն ըլլալով հանդերձ, « հոս պիտի ըլլայ յուզումնալից խօսքեր ար- « տասանելու Գեղի համար. յանուն ընկերներ, « բողոք, որ քեզի բարեկամ եղան, բովանդակ « ընկերներով որ գիտութեական ծառայութեան « պատենաով հեռու քեզմէ ծնացին, անոնք իսկ « ներկայ են:

« Երէկ ալ, ինչպէս ամէն օր, մեզմէ երեք « հոգի գրեզ գտնելու եկան: Աղողնութիւնդ լսե- « լու վստահութեամբ եկած՝ կուրծքերուն մէջ « ծածկուած ամենատխուր պարբերութեանց մը « կարծան: Մեզի իմացուցին զայն որ իրենց կը « սպասէիք. Ապրոն մեռած է:

« Ամէնք ալ բնական ազգամայր քու վայրդ « գտնելու դիմեցին, պարապ, շատ պարապ: Ես « ալ պէտք էի, ուրիշներուն պէս աշփոթուս բի- « բերը սեւեռլ դէպ ի անաց Եւրոպականութե- « թիւնը, և սիրտս կարծես այլեւ չէր բաբայեր: « Ապրոն մեռած է, վատախտ հիւանդութենէ՞ « մը բռնուած մեռած է արդօք: Անկարելի կը « թուի ինչ:

« Երբ խորենիքը 1915ի պայծառ Մայիսին « մէջ հաւաքեց իր լուսազոյն Ողորները, նա, որ « չէր կրնար պակսիլ, մեզի հետ եկաւ, իտա- « լական ամենագեղեցիկ և ամենահզօր երթտա- « սարդութեան հետ, որ կը յառաջէր նուագելով « ամենաքաղցր Մօր Հայրենիքի երգերը, կը յա- « ռաջէր գերագոյն զաղափարներու ընդառաջ, « Քաղաքակրթութեան դատին համար, տեւտ- « նական բարբարոսութիւններուն դէմ, տակաւին « ընկճեալ Եզրայրներուն փրկութեան համար: « Քարոսոյի, Բագուպիոյի, Բախիդցիցայի վրայ « տեսանք գրեզ, անցեալ նոյեմբերի ողբերգա- « կան օրերուն մէջ, յորում մեզմէ իւրաքան- « չիւրը երկաթեայ կամք մըն էր, գերմարդկային « ոյժ մը:

« Թշնամին՝ Հայրենիքի ուրիշ հող մը կոխ- « տելու համար, պէտք էր մեր ցուրտ դիակներ: « Բուն վրայէն անցնէր, և յետոյ Յունիսի մեր « զօրաւոր և ամրապինդ դիմադրութիւնը շախ- « շախել: Եւ յետոյ միշտ պատճառաբաններուն « մէջ գտնուեցար բովանդակ հաւատաբով, ապր- « տամբութեան և անդիմադրելի յաղթութեան « վերջին օրերուն:

« Երբդանդեղ Բիաւէի վրայ նետուած առաջին « թեթև կամուրջին վրայէն անցնելով, կրակի « փոթիկի մը տակ, ամէն տեղ կը հասնէր ուր « որ իտալացի զինուոր մը կար, լուսաւորելու « համար զայն իր արևադէմ ճակտովը: Արշա- « մը, ցնորք մը:

« Ոչ մէկ թշնամի ոյժ՝ չպիտի կարենար մե- « զի դիմադրելու ճարիէ մը ի վեր մեզի սպա- « սող, զմեզ բարձրաձայն կոչող եղբայրներն « ազատելով սահմանազխին վրայ հասանք, « յետոյ Դրենդոյ, Դրիէսդ, և ուրիշ վայրեր: « Իսկ հոս միշտ մեզի հետ եղար: Ահա թէ « ինչո՞ւ ես արար չեմ կրնար մտածել թէ Յադ- « թուիքնէն քիչ վերջ, յետ բոլոր կոտիւն մաս- « նակցելու բովանդակ իր զոհողութիւններով, « իր բոլոր վտանգներով և ամէն ժամանակ « պատրաստ եղած պատահարներով, Դու մեռած « ըլլաս ո՞վ Տ՝ Ապրոյ փոխանցիկ հիւանդու- « թենէ մը:

« Սխալ է, Դու կոտելով ինկար, մահացու « վիրատարութեամբ թշնամիէն՝ իտալական էն փա- « ռանդ օրուան մէջ:

« Վատաբախտ Մայրդ իր սրբազան ձեռքերն « ընկմանց վէրքերուդ արիւնին մէջ, որ յետոյ « օրհասի ժամուն կուրծքին վրայ միաւորեց, « թողով քեզի որոմամթախիծ ցաւով խաշ մը, « միւս խաշին վրայ ան ևս ցաւով մը սիրա- « թափեց և զթայնեց, որուն հանդէպ հազա- « ղաւոր վշտագին եղբայրներ ձեռքերնին տա- « րածեցին օրհնելու համար:

« Երկինքը կը բարձրանաս այժմ այն ձեռքերը « քու յաւիտեական հանգիստդ խնդրելու հա- « մար և սովաւ մը ամբողջ մոռոցիդ ցաւ- « րուն: Թող միկթարութին անոնք գիտնալով թէ « այսպէս սիրուած ես, թէ գերեզման կ'իջնես « մեր յաւերժական յիշատակի բոլոր ծաղիկ- « ներովը:

« Խաղաղութիւն »:

Այս զգայուն խօսքերու տպաւորութեան տակ, ներկաները կարծես կը լսէին դա- յադէն ձայն մը՝ որ կը մրմնջէր իրենց, սրտերուն. « Մշտնջենական օրինակ մը թողուցի ձեզի, հետեւեցէք անոր »:

Խաւիւիոյ այդ մութ անկեան մէջ կա- տարուած յարգանքի ցոյցին մասնակցե- ցաւ Նափոլիի ամբողջ նահանգը, և իր խորհրդարանը յետ անոր սիրելիաց սուգը իր մէջ բաժնեկու, միաձայն հաւանութեամբ քուէարկեց տի Դիալիոյ և Ռուսսոյ խոր- հրդաականաց հետեւալ բանաձեռն.

« Կը խնդրենք որ խորհրդարանը ուղարկէ իր « ցաւացութիւնները տ'Ապրոյ Բագրատունի իշ- « խանին, որ արդէն մեր յարգելի և սիրելի « ընկերն եղաւ, իր Ումպիթոյ զաւկին մահուան « առթիւ:

« Մեծարգոյ երիտասարդը այսպէս անգթօրէն « խուցեցաւ կեանքէն, պիտի կարենար վայելել « իր տան գլուխութիւններն և ճողողարիւ, ինչպէս « շատերը, իր քաղաքացւոյ սեփական պարտքի « կատարումէն, այն ծանր ժամուն ուսկից ան-

« ցաւ Հայրենիքը: Ան, ընդհակառակն, պսակաւ
« ւոր փաստաբանն և սերունդ երեւելի ընտանիքի
« մը, ուզեց կամաւոր ըլլալ մեր պատերազմին
« և վազեց գրաւել տեղ մը՝ զոր գիտցաւ պաւ-
« տուաւոր կերպով բռնել նոյն իսկ ամենաժաճնը
« վայրկեաններուն մէջ: »

« Եղաւ այսպէս մարտիկ Քարտիկ վրայ, Բա-
« սուպիոյ վրայ, Բախնզիցցայի վրայ, Բիււէի
« վրայ, Կրափիփայի վրայ, անոնց մէջ, որ իրենց
« կոտորեցիւրով պատուար կանգնեցան Խտալիոյ
« երկիրներու արշաւանքին: »

« Յետոյ երբ պիտի կարենար դառնալ իր սի-
« բեիաց բազուկներուն մէջ, ոչ պատերազմով,
« այլ շարիքով մը, զոր պատերազմը կը հեզնէ,
« ինչպէս կ'ըսէ իր մէկ Գնդապետը, գեկտեմբեր
« 16ին ի Սան Մարթինոյ տի Լուփարի, գինուտ-
« րական հիւանդանոցի մը մէջ չիշուաւ տալով
« այդ կերպով Հայրենեաց իր վերջին, գերաւ-
« գոյն պարթը: »

« Թող երթալ ուրեմն մեր խորհուրդին երախ-
« տագէտ մտածութիւնն առ իր վշտագին ծնողը,
« և թող երթալ առ այն ամենազնուական բաժ-
« բիւը որ է տ'Ապրոյ Բագրատունի իշխանուհին՝
« պատերազմի բովանդակ չըջանին գթութեան
« գերազոյն հրեշտակ մեր քաջարի զինուորնե-
« բուն: Արշափ սրտաշարժ գրուագներ՝ շատերէն
« մոռցուած, կը դարձնեն միշտ աւելի յարգելի
« այդ ազնիւ տիկնոջ դէմքը, որ յաճախ մեռել-
« ներու գլխու բարձին մօտ հեռաւոր մօրը տեղը
« բռնեց: »

« Ո՛հ, այո՛, թող երթալ առ այդ ազնուական
« տիկինը՝ նահանգային ժողովին ցաւակցական
« արտայայտութիւնը իր պաշտելի զաւկին կո-
« բուստին համար: »:

Նափոլիի շահապը, Լապրիուա, Թարգ-
ման հանդիսանալով զգացումներուն այդ
հին քաղաքին, որ երկար տարիներ իր
ծոցին մէջ ասպնջականեր էր պարձանքով
Բագրատունեաց գերդաստանը, հայազգի
իշխանին ուղղել է գեղեցիկ նամակ մը,
զոր կը ղնենք հոս գոհացնելու համար
մեր ազգայնոց փափագը:

Նափոլի, 20 Յուն. 1919

Մեծապաշտօն իշխան տ'Ապրոյ Բագրատունի,

Նահանգային ժողովը, որ պանծանօք կը յիշէ
իր քաղաքացիները, որոնք անառէ Հէքեր գրեցին
ներկայ պատերազմին մէջ, նորագոյն նստի մը
մէջ յիշատակեց արժանապէս Ումպէրթոյ տ'Ա-
պրոյ Բագրատունի սպան, որ, կամաւոր մեկ-
նելով, կոռուցաւ ամենադժնդակ պատերազմները,
տալով յարատեւ ապացոյց դիւցազնութեան, և
մասնաւորապէս նշանաւոր հանդիսանալով Կրափ-
փայի և Բիււէի վրայ, և որ յետոյ հարկաւ
դրուեցաւ ընկճուելի գինուորական հիւանդանոցի
մը մէջ, զարնուած վարդազ ախտէն:

Քաղաքային երեսփոխանութիւնը կ'ուղղէ իր
մխիթարութեան խօսքը հանգուցելոյն թախճաւ-
գին հօրը, յարգալիր կը խոնարհի վշտակիր
մօրը առջև, որ պատերազմի բոլոր տեղութեան՝
ինքնուրացութեան ամենազնուական օրինակ
տուաւ, վերաւոր և հիւանդ գինուորներուն օգ-
նութիւնն ու քաջալեր տալով, և կ'ուղղէ իրենց
ըղձանքը՝ թէ այն ազնուական պատանաղին մտաւ-
ծութիւնը՝ որու համար իրենց որդեակը կամաւ-
ւորապէս նուիրեց իր կենսքը, ըլլայ մեղմացում
իրենց անհուն վշտին:

Ամենայն մեծարանօք

ԼԱՊՐԻՈԼԱ:

Երիտասարդ հայ սպային կորուստը,
զոր արժուէիքէն սկսեալ մինչև յետին
նափուլթան գեղջուկը ափսոսաց, ան-
մխիթար սուգի դատապարտեց ծերունի
իշխանը Ասլան Բագրատունին, որ յետ
երկար տարիներ հայ դատի անխոնջ պաշտ-
պանը կանգնելու եւրոպական պետութեանց
քով, ինչպէս գրած եմ այլուր, իր վշտի
սփոփանքը փնտոցե դարձեալ իր մար-
տիրոս ցեղին անծայր տառապանքներուն
մէջ: Ան, առիթ առնելով իր որդոյն մահը,
հայրենաշունչ փառաւոր նամակ մ'ուղղեց
պատուաւորան երեսփոխան Լուիճի Լու-
ցաթթիի, Հայութեան անպարտելի, անկեղծ
բարեկամին ու պաշտպանին: Անշուշտ
ախորժելի պիտի ըլլայ ազգայնոց տեսնել
յիշեալ թուղթը:

Աւետարիւն

Հայ եմ ծագումով և իտալական քաղաքացի,
և այդ սիրելի Հայրենիքին համար ուր կ'ապրիմ,
տուած կ'ըլլայի բազուկս՝ եթէ տարիները թոյլ
տային ինձ:

Այդ բանը ըրաւ իմ մրակ որդին, փաստաբան
Ումպէրթոյ, որ պատերազմի սկզբին գինուորաւ-
գրուեցաւ կամաւոր, սպայ, ապա հրետանիին.
հաւաքով ու խանդով կատարեց իր պարտքը,
և յետ ամենամեծ վտանգներ անցընելու, Բասու-
պիոյ վրայ, Քարտոյի վրայ, ի Բախնզիցցաւ, ի
Կրափիփա աւանդեց հոգին, դեռ քանի մ'օր կ'ընէ,
պատերազմական հիւանդանոցի մը մէջ հիւան-
դութեամբ « հետեանք պատերազմի աղէտնե-
րուն »:

Լքուած հայր, որու ուշինչ կը մնայ յուսալ
կենսքի մէջ, կ'ուղղուիմ Ձեր Վսեմութեան՝
յայտնելու համար իմ ամենախորին երախտա-
գիտութիւնը զոր արթնցուցած է ոգւոյս մէջ
հիւնալի պաշտպանութիւնը զոր Գուք կատարեցաւ
ի նպատաւ Հայոց, և ուղղել Ձեզի ուրիշ ոչ նուազ
եռանդագին խնչուածք մը, այն է՝ որ ուզենաք

չարունակել և թեւարկել ամենանուիրական իրաւունքները Հայոց որոնց մէջէն կը համրուին այնքան հայրեր ու մայրեր, որոնք կրեցին բարբառոս հարստահարիչներու կատաղութենէն՝ ինծի վիճակուած ճակատագիրը, և չ'ունեցան Հայրենեաց համար եղած զոհին մխիթարութիւնն ու փառապատկը:

Զեմ տարակուսիք որ Զեր վսեմութիւնը պիտի ընդունի սիրալոյսը իմ շնորհակալութիւններս և աղայանքս, և այդ վստահութեամբ կը յայտարարեմ զիս Զեր վսեմութեան, ևն:

Հեռանալով այսպիսի աննման անձնաւորութենէ մը, ինչպէս որ էր իշխան Ումպէշթոյ Բագրատունի, իր խանդակաթ ծնողաց և ազգականաց կակածանաց և արտասուած հետ կը խառնենք նաև մերինները, և այս համեստ տողերը՝ իբրև փունջ մը ծաղկանց ի սրտէ Միարանութեան, կը նուիրենք իր սիրելի յիշատակին, որ անմահ ու անթառամ պիտի մնայ միշտ մեր մէջ:

Հ. Ս. ՏԵՐ-ՄԱՐԿԵՍԻԱՆ



ՄԵԾ ԱՌԵՂԾՈՒՄԸ՝



Հանդէպ տեսարանին՝ զօր կը պարզէ մեր աչաց առջև ամառնային գեղեցիկ գիշեր մը, երբ ամէն բան կը ներհէ երկրիս վրայ և երբ բնութեան լուսթիւնը կը հրաւիրէ խորհելու և զննելու, սիրելի ընթերցող, երբեք չ'ես ուզած անձկալի աչքերով քննել, հետազոտել աստեղագաւոր երկնից զաղտնիքը: Երբեք չ'ես ունեցած փափաք զոհացնելու քու օրինաւոր հետաքրքրութիւնդ այս կէտիս վրայօք, գէթ չ'ես ուզած, ճանչնալ Աստեղագրութեան հազարաւոր տարիներէ ի վեր մարդկութեան առջև դրած ամենահրապուրիչ խնդիրնեքու լուծումը:

Այս երկնակամարը՝ ինչպէս գիտես եւ ընդթ մըն է, Բոլոր աստղները, սկսեալ ամենէն աւելի փայլուններէն մինչև ամենէն աւելի նուաղները, որոց լոյսը կը փալկի ի երկնքին խորը, բոլոր այս արփինքը,

նոյն իսկ անոնք որոնք մեր ուղղակի տեսութենէն կը վրիպին և զանոնք հեռադէտն կը պարզէ մեր զարմացած նայուածքին առջև, բոլոր այս լուսաւոր կէտերը որ կը տպաւորուին մեր լուսանկարի ապակիներու վրայ, բոլոր այս հեռաւոր մարմինները՝ այնքան արեւներ են շոյալօրէն նետուած միջոցին խորը:

Մեր Արեւային դրութիւնը, այն՝ որ իբր կեդրոն ունի մեր Արեւ, կղզեակ մըն է կորսուած այս անհուն արշիպեղագոսի մէջ. ինքն իսկ պարզ աստղ մըն է այս երեւակայական համախմբին, իոնարհ զինուոր մը՝ երկնային մեծ բանակին:

Ինչ տեղ կը զբաւէ ամբողջութեան մէջ, ՈՐ կողմը կը տարածուի իւր տերութիւնը:

Երկիրս՝ որ մեզի թուի այնքան լայնածաւալ, փոքր աւագէ հատ մ'է կապեալ իւր Արեւուն ձգողական անփոփոխելի օրէնքներով, Երբեմն սա ալ կը փայլէր իբր փոքր աստղ մը՝ երկնքի անսահմանութեան մէջ, իր քոյր մոլորակներուն քով, կազմելով անոնց հետ օրուան աստղին լուսաւոր ջրախումբ մը. բայց, դարեւու սահելովն, միջոցին ցուրտը թանձրացոց իր կեղևանքը, անոր մակերեսին վրայ այն ատեն տեսնուեցաւ կեանքը, և մենք խորհող փոշի՝ վերջին եկողներս, այն դիւրաբեկ կեղևին վրայ, սողալով նուրբ կարծրացած մաշկի մը վրայ, հաւ օդաչունք ենք այս սկար նաւին:

Առանց մեր անդրադառնալուն կը ճառապարհորդենք աստեղամէջ միջոցին մէջ. վասն զի Երկիրս ոչ միայն տարուան մը մէջ շրջան կ'ընէ իր Արեւուն ճառագայթներու մէջ, այլ այս մեծ աստղն զմեզ կը տանի հետը երկնքին խորը:

Մեր առջև բացուած լայնաբաց դատարկութեան մէջ կ'լինանք, Պիտի չհանդիպէ՞ք արգելքի մը մեծղի պարունակի վրայ զոր կ'ընթանանք:

Ինչպէս նաւապետ մը կը հսկէ իր նաւին ընթացքին վրայ, աստեղագէտն անդադար աչքը իր զօրաւոր հեռադիտին վառարանին վրայ, անհանգիստ կը դիտէ Երկրիս անկանոն ընթացքը, իւր ետեւ աստղները կը